

Ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

Ագրոտեխ ՍՊԸ

31 դեկտեմբերի 2024թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	6
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	9
Դրամական հոսքերի մասին հաշվետվություն	10
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	12

Անկախ աուդիտորի եզրակացություն

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street
Yerevan 0015
Republic of Armenia

T +374 10 50 09 64/61

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
Երևան Պլազա բիզնես
կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9

Հեռ.՝ +374 10 50 09 64/61

Ազրոտեխ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության բաժնետերերին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել Ազրոտեխ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման էական քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «*Աուդիտորի պարասխանադրությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար*» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «*Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի*» (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ նշված պահանջների և ՀԷՄՍԽ կանոնագրքի համաձայն: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանն դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արմեն Հովհաննիսյան
«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի
տնօրեն

29 օգոստոսի 2025թ.



Էմիլ Վասիլյան
Առաջադրանքի պատասխանատու

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2024թ.	2023թ.
Հասույթ	5	3,744,791	3,287,624
Վաճառքի ինքնարժեք		(3,080,198)	(2,696,593)
Համախառն շահույթ		664,593	591,031
Այլ եկամուտ		44,574	37,362
Իրացման ծախսեր	6	(129,245)	(98,583)
Վարչական ծախսեր	7	(223,682)	(264,925)
Այլ ծախսեր	8	(147,175)	(6,557)
Գործառնական գործունեությունից շահույթ		209,065	258,328
Ֆինանսական ծախսեր	9	(116,727)	(104,562)
Փոխարժեքային տարբերությունից զուտ օգուտ (վնաս)	10	67,058	(51,279)
Շահույթ մինչև հարկերը		159,396	102,487
Շահութահարկի գծով ծախս	11	(24,885)	(13,497)
Տարվա շահույթ		134,511	88,990
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Հոդվածներ, որոնք հեփազայում չեն վերադասակարգվի շահույթին կամ վնասին			
Հիմնական միջոցների վերագնահատում		-	353,549
Չվերադասակարգվող հոդվածներին վերաբերող շահութահարկ		-	(63,639)
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո		-	289,910
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		134,511	378,900

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 33-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	12	920,681	971,372
Ոչ նյութական ակտիվներ		975	1,118
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		921,656	972,490
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	15	1,031,112	1,005,591
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	14	1,060,755	664,672
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ		15,489	6,669
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		2,107,356	1,676,932
Ընդամենը ակտիվներ		3,029,012	2,649,422

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Կապիտալ և պահուսպներ	16		
Կանոնադրական կապիտալ		134,000	134,000
Վերագնահատման պահուստ		435,987	435,987
Կուտակված շահույթ		438,317	303,806
Ընդամենը սեփական կապիտալ		1,008,304	873,793
Պարտավորություններ			
Ոչ ընթացիկ			
Վարկեր և փոխառություններ	13.2	15,896	1,852
Հետաձգված հարկային պարտավորություններ	17	72,471	81,711
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		88,367	83,563
Ընթացիկ			
Վարկեր և փոխառություններ	13.2	1,321,484	1,261,786
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	18	576,680	430,280
Ընթացիկ հարկային պարտավորություն		34,177	-
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		1,932,341	1,692,066
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		3,029,012	2,649,422

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2025թ. օգոստոսի 29-ին:

Խաչատրյան Նաիրա
Տնօրեն



Աիդա Արզումանյան

Էն ընդ Քեյ Կոնսալթինգ ՍՊԸ-ի տնօրեն

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 33-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Կանոնադրական կապիտալ	Վերագնահատման պահուստ	Կուտակված շահույթ	Ընդամենը
2023թ. հունվարի 1-ի դրությամբ մնացորդ	121,000	146,077	479,751	746,838
Տարվա շահույթ	-	-	88,990	88,990
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	289,910	-	289,910
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	289,910	88,990	378,900
Կանոնադրական կապիտալի համալրում	13,000	-	-	13,000
Շահաբաժիններ	-	-	(264,945)	(264,945)
Գործարքներ սեփականատերերի հետ	13,000	-	(264,945)	(251,945)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	134,000	435,987	303,806	873,793
Տարվա շահույթ	-	-	134,511	134,511
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	134,511	134,511
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	134,000	435,987	438,317	1,008,304

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 33-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական հոսքերի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	2024թ.	2023թ.
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա շահույթ	134,511	88,990
Ճշգրտումներ՝		
Մաշվածություն և ամորտիզացիա	35,235	31,574
Հիմնական միջոցների օտարումից (օգուտ) վնաս	(3,144)	17
Շահութահարկի գծով ծախս	24,885	13,497
Ֆինանսական ծախս	116,727	104,562
Ապրանքների արժեքի նվազում	584	3,338
Անհուսալի և կասկածելի դեբիտորական պարտքերի պահուստավորման ծախսեր, զուտ	48,601	(12,396)
Փոխարժեքային տարբերությունից (օգուտ) վնաս	(67,058)	51,279
Գործառնական շահույթ նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները	290,341	280,861
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	(446,634)	(85,090)
Պաշարների փոփոխություն	(26,105)	(96,588)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	152,872	(65,389)
Գործառնական գործունեությունից ստացված (գործունեության համար օգտագործված) դրամական միջոցներ	(29,526)	33,794
Վճարված տոկոսներ	(114,799)	(81,035)
Վճարված շահութահարկ	52	(76,273)
Գործառնական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(144,273)	(123,514)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(1,674)	(30,210)
Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր	20,417	-
Ներդրումային գործունեությունից ստացված (գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ	18,743	(30,210)

Դրամական հոսքերի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ	2024թ.	2023թ.
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Կանոնադրական կապիտալի թողարկումից մուտքեր	-	13,000
Վարկերից և փոխառություններից մուտքեր	133,797	408,684
Վճարված շահաբաժիններ	-	(264,945)
Ֆինանսավորման գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	133,797	156,739
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	8,267	3,015
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	553	963
Դրամական միջոցների և դրանց համարժեքներ տարվա սկզբում	6,669	2,691
Դրամական միջոցների և դրանց համարժեքներ տարվա վերջում	15,489	6,669

Դրամական հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 33-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Ագրոտեխ ՍՊԸ

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (արտահայտված
հազար հայկական (<<) դրամով)

1 Գործառնությունների բնույթը

Ազրոտեխ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (Ընկերություն) ստեղծվել է Ընկերության մասնակցի Հարություն Յուրիկի Առաքելյանի 2014թ. սեպտեմբերի 9-ի որոշման համաձայն:

Ընկերության գործունեության հիմնական նպատակն է ջերմատնային տնտեսություններում և բաց գրունտում գյուղատնտեսական արտադրանքի արտադրության համար անհրաժեշտ բարձրորակ ապրանքների մատակարարումը և այդ բնագավառում խորհրդատվության տրամադրումը:

Ընկերությունը համագործակցում է եվրոպական, ռուսական, իսրայելական և աշխարհի այլ առաջատար արտադրողների հետ և Հայաստան է ներմուծում վերջինների արտադրության հետևյալ ապրանքները՝

- ազոտական, ֆոսֆորական, կալիումական պարարտանյութեր, առանձին միկրոէլեմենտներ պարունակող պարարտանյութեր, համակցված պարարտանյութեր և օրգանական պարարտանյութեր,
- հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարի կենսաբանական, քիմիական և մեխանիկական պաշտպանության միջոցներ,
- փոշոտող իշամեղուներ,
- բույսերի հիդրոպոնիկ մշակության համար կիրառվող օրգանական և հանքային սուբստրատներ,
- բույսերը արևի ճառագայթներից պաշտպանելու համար ջերմատների տանիքները ներկելու և ներկը մաքրելու միջոցներ,
- ջերմատների և այլ գյուղատնտեսական տարածքների ախտահանման միջոցներ,
- պտղատու ծառերի և բարձրարժեք հատապտուղների տնկանյութ,
- ջերմատան արքեսուարներ,
- գյուղատնտեսական արտադրանքի արտադրության համար անհրաժեշտ այլ ապրանքներ:

Ընկերությունը գյուղատնտեսական արտադրանքի արտադրողներին տրամադրում է ագրոնոմիական խորհրդատվություն Ընկերության և արտերկրի օրակավորված մասնագետների միջոցով:

Ընկերության մասնակիցներն են՝ Հարություն Առաքելյանը (81%) և Նաիրա Խաչատրյանը (19%):

2 Ընդհանուր տեղեկատվություն, ՖՀՄՍ-ներին համապատասխանության հավաստում և անընդհատության ենթադրություն

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Արմավյան, 2-րդ արդյունաբերական թաղամաս, թիվ 3 շինություն:

2024թ.-ին Ընկերության հիմնական աշխատողների տարեկան միջին թվաքանակը կազմել է 36 մարդ (2023թ.՝ 35 մարդ):

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ), որոնք հաստատվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (<<ՀՄՍԽ) կողմից և Մեկնաբանությունների՝ հաստատված Ֆինանսական հաշվետվությունների մեկնաբանությունների միջազգային կոմիտեի կողմից (ՖՀՄՄԿ):

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության հիմունքներով, քանի որ ղեկավարությունը կարծում է, որ Ընկերությունը ունի համապատասխան ռեսուրսներ տեսանելի ապագայում անընդհատ գործունեություն իրականացնելու համար: Այս գնահատումը կատարելիս ղեկավարությունը հաշվի է առել տեղեկատվության լայն շրջանակ, ներառյալ շահութաբերության կանխատեսումը, ֆինանսավորման կարիքները: Գնահատումը ներառում է նաև ողջամտորեն հնարավոր անկումային տնտեսական սցենարների և դրանց հնարավոր ազդեցությունների դիտարկումը Ընկերության շահութաբերության, կապիտալի և իրացվելիության վրա:

Գործարար միջավայր

Հայաստանի գործարար միջավայրը բախվում է մարտահրավերների՝ կապված աշխարհաքաղաքական լարվածության, մասնավորապես՝ Ադրբեջանի կողմից շարունակվող ագրեսիայի և տարածաշրջանային անկայունության հետ: Ուկրաինայի պատերազմն էլ ավելի է բարդացրել իրավիճակը՝ առաջացնելով առևտրի խափանումներ, Ռուսաստանի դեմ պատժամիջոցներ և համաշխարհային գնաճ: Հայաստանի կախվածությունը Ռուսաստանից թուլացել է՝ ազդելով առևտրի, դրամական փոխանցումների և անվտանգության երաշխիքների վրա՝ դրդելով Հայաստանին դիվերսիֆիկացնել իր տնտեսական հարաբերությունները, թեև դա էլ իր ռիսկերն է պարունակում:

Հայկական դրամը սպասվածից ավելի ուժեղ գտնվեց՝ զսպելով գնաճը, բայց դժվարություններ ստեղծելով արտահանողների և արտարժույթային պարտավորություններ ունեցող ձեռնարկությունների համար: Համաշխարհային գնաճը և էներգայի աճող գները ճնշում են գործադրում Հայաստանի տնտեսության վրա՝ հատկապես ներմուծումից կախվածության պատճառով:

Չնայած այս մարտահրավերներին՝ ձեռնարկությունները դիվերսիֆիկացնում են մատակարարման շղթաները և ուսումնասիրում նոր շուկաներ, իսկ կառավարության բարեփոխումների ջանքերը երկարաժամկետ կայունության ուղի են ապահովում: Այնուամենայնիվ, Հայաստանի հաջողությունը կախված կլինի իր ձեռնարկատիրության՝ այդ ռիսկերը արդյունավետորեն նավարկելու կարողությունից:

Տվյալ ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Ընկերության գործունեության վրա՝ Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ընկերության ղեկավարությունը շարունակաբար վերլուծում է տնտեսական իրավիճակը ներկա միջավայրում: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Ընկերության գործունեության վրա կարող են տարբերվել Ընկերության ղեկավարության ներկա սպասումներից:

3 Նոր և վերանայված ստանդարտներ կամ մեկնաբանություններ

3.1 2024թ. հունվարի 1-ի դրությամբ ընդունված նոր ստանդարտներ

Ընթացիկ տարում Ընկերությունն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2024թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Նշված փոփոխությունների բնույթը և ազդեցությունը բացահայտված են ստորև:

Ներքոհիշյալ նոր ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2023թ., որևէ էական ազդեցություն չեն ունեցել Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

- «Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ» (ՀՀՄՍ 1 փոփոխություններ),
- «Վարձակալության գծով պարտավորությունը վաճառք և հեփադարձ վարձակալությամբ գործարքներում» (ՀՀՄՍ 16 փոփոխություններ),
- «Կովենանտով ոչ ընթացիկ պարտավորություններ» (ՀՀՄՍ 1 փոփոխություններ)

3.2 Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունում՝ սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխություններն էական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև:

- «Փոխանակելիության բացակայություն» (<<ՄՍ 21 փոփոխություն)
- «Ֆինանսական գործիքների դասակարգման և չափման փոփոխություններ» (<<ՄՍ 9 և <<ՄՍ 7 փոփոխություններ)
- <<ՄՍ 18 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում»

4 Հաշվապահական հաշվառման էական քաղաքականություն

4.1 Պատրաստման հիմքերը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ հողամասերի և շենքերի, որոնք հաշվառվում են վերագնահատված արժեքներով:

4.2 Արտարժույթ

Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (<< դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել կիրառելի է Ընկերության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: << դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (<< ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ << ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը:

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
<< դրամ/1 ԱՄՆ դոլար	396.56	404.79
<< դրամ/1 եվրո	413.89	447.90

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի արդյունքում:

4.3 Հասույթ և այլ եկամուտներ

Հասույթը գոյանում է հիմնականում ապրանքների վաճառքից և ծառայությունների մատուցումից:

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով՝ հաշվի առնելով Ընկերության կողմից տրամադրված ցանկացած առևտրական զեղչերը և իջեցումների գումարները:

Հասույթից նվազեցվում են հաճախորդների կողմից վերադարձվելիք ապրանքների գնահատված գումարը, գնահատված իջեցումները և նմանատիպ այլ նվազեցումներ:

Որոշելու համար, թե արդյոք անհրաժեշտ է ճանաչել հասույթ, թե ոչ, Ընկերությունն առաջնորդվում է 5-բայթի գործընթացով:

1 Բացահայտել հաճախորդի հետ պայմանագիրը

- 2 Բացահայտել կատարման պարտականությունները
- 3 Որոշել գործարքի գինը
- 4 Բաշխել գործարքի գինը կատարման պարտականությունների միջև
- 5 Ճանաչել հասույթը, երբ կատարման պարտականությունը(ները) բավարարված են

Հասույթը ճանաչվում է կամ ժամանակի մեջ որևէ պահին կամ ժամանակի ընթացքում, երբ Ընկերությունը բավարարում է կատարման իր պարտականությունը՝ հաճախորդին փոխանցելով խոստացված ապրանքը կամ ծառայությունը:

Ապրանքների վաճառք

Ապրանքների վաճառքից ստացված հասույթը հիմնականում ներառում է Ընկերության կողմից ներմուծված գյուղատնտեսության համար օգտագործվող պարարտանյութերի իրացումը: Ապրանքների վաճառքից ստացված հասույթը ճանաչվում է, երբ Ընկերությունը գնորդին է փոխանցում ապրանքների սեփականության հետ կապված ռիսկերի և հատույցների նշանակալի մասը:

Ապրանքների վաճառքից ստացված հասույթը ճանաչվում է, երբ՝

- Ընկերությունը գնորդին է փոխանցել ապրանքների սեփականության հետ կապված ռիսկերի և հատույցների նշանակալի մասը,
- Ընկերությունը չի պահպանում ո՛չ կառավարման շարունակական մասնակցություն, որը սովորաբար բխում է սեփականության իրավունքից, ո՛չ էլ՝ վաճառված ապրանքների նկատմամբ արդյունավետ վերահսկողություն,
- հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը,
- հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն,
- հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի հետ կապված կատարված կամ կատարվելիք ծախսումները:

4.4 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որը կազմում է 1-5 տարի:

4.5 Հիմնական միջոցներ

Հողերը և շենքերը, որոնք օգտագործվում են իրացման կամ վարչական նպատակով, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված են վերագնահատված արժեքով, որն իրենից ներկայացնում է վերագնահատման օրվա դրությամբ հիմնական միջոցի իրական արժեքը՝ հանած հետագա կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները: Ցանկացած կուտակված մաշվածություն վերագնահատման օրը բացառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքից և ակտիվի վերագնահատված արժեքում ներկայացվում է զուտ արժեքը:

Հիմնական միջոցների վերագնահատումից արժեքի աճը վերագրվում է այլ համապարփակ եկամուտներին և արտացոլվում է սեփական կապիտալում՝ որպես վերագնահատման պահուստ: Սակայն, եթե այդ աճը վերականգնում է նույն ակտիվի նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած նվազումը, այն ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ որպես եկամուտ այն չափով, որով նախկինում նվազումը ճանաչվել էր որպես ծախս: Երբ հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով նվազում է, նվազումը ճանաչվում է շահույթում կամ վնասում այն չափով, որը գերազանցում է նույն ակտիվի գծով նախորդ վերագնահատումից առաջացած վերագնահատման աճը:

Վերագնահատումից աճը ճանաչվում է կուտակված շահույթում Ընկերության կողմից ակտիվի օգտագործմանը զուգահեռ: Կուտակված շահույթում ճանաչված վերագնահատումից աճը իրենից ներկայացնում է ակտիվի վերագնահատված հաշվեկշռային արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության և ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության տարբերությունը: Վերագնահատված հիմնական միջոցի միավորի իրացման կամ դուրսգրման դեպքում վերագնահատման պահուստում դրա գծով առկա վերագնահատումից աճն ուղղակիորեն վերագրվում է կուտակված շահույթին:

Հիմնական միջոցների այլ հոդվածները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման, և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենքեր և շինություններ - 10 տարի

Մեքենաներ և սարքավորումներ և այլ - 1-8 տարի

Քանի որ հողի համար հնարավոր չէ որոշել վերջավոր օգտակար ծառայության ժամկետ, համապատասխան հաշվեկշռային արժեքը չի ամորտիզացվում:

4.6 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորություններն ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՍ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ամորտիզացված արժեքով հաշվառվող,
- իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող,
- իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով չափվող:

Դասակարգումը բնորոշվում է հետևյալ երկու պարագայով.

- Ընկերության՝ ֆինանսական ակտիվների կառավարման քիզնես մոդելը,

- Ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները:

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, արտացոլված են ֆինանսական ծախսերում, ֆինանսական եկամուտում կամ այլ ֆինանսական արդյունքներում, բանկային ավանդների արժեզրկման, որն արտացոլված է այլ ծախսերում : Ընկերության ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են Ծանոթագրություն 13-ում:

Ֆինանսական ակտիվների հետագա չափումը

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին (և չեն դասակարգված որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող)։

- դրանք պահվում են այն թիզներ մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը,
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմաններն առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն դեպքերում, երբ զեղչման ազդեցությունն աննշան է, զեղչում չի կատարվում: Ֆինանսական գործիքների այս կատեգորիայում են դասակարգվում Ընկերության դրամական միջոցները և դրանց համարժեքները, առևտրային դեբիտորական պարտքերը և բանկային ավանդները:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառում են առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը: Ընկերության ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են Ծանոթագրություն 13-ում:

Վարկեր և փոխառություններ

Վարկերը և փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Իրական արժեքի և նոմինալ արժեքի տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ փոխառությունը ստացվել է սեփականատերերից: Այս դեպքում իրական և նոմինալ արժեքների միջև տարբերությունը ճանաչվում է սեփական կապիտալում որպես լրացուցիչ կապիտալ: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս, բացի որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանն ուղղակիորեն վերագրվող փոխառության ծախսումներից, որոնք կապիտալացվում են որպես այդ ակտիվի արժեքի մաս:

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

4.7 Պաշարներ

Պաշարներն այն ակտիվներն են, որոնք պահվում են սովորական գործունեության ընթացքում վաճառքի համար, կամ հումքի, կամ նյութի ձևով՝ արտադրանքի թողարկման կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործելու համար: Պահեստամասերը, վթարային սարքավորումները և օժանդակ սարքավորումները նույնպես ճանաչվում են որպես պաշար, եթե դրանք չեն համապատասխանում հիմնական միջոցների սահմանմանը:

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝ օգտագործելով առաջին մուտք՝ առաջին ելք (ԱՄԱԵ) մեթոդը, և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

4.8 Պետական շնորհներ

Շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Ընկերությունը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է:

Շնորհները, որոնց հիմնական պայմանը Ընկերության կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռք բերելն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ակտիվների վերաբերող շնորհ և սիստեմատիկորեն փոխանցվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Ընկերության կանոնադրական նպատակների համար ստացված շնորհը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ որպես եկամուտ այն տարում, երբ դրանք ստացվել են:

4.9 Շահութահարկ

Ընթացիկ հարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկ

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Ընկերությունը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Ընկերությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

4.10 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են բանկային հաշիվների մնացորդները:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցների համարժեքները կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներն են, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ:

Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով: Ընկերությունը դասակարգում է ներդրումները որպես դրամական միջոցների համարժեքներ այն դեպքում, եթե դրանք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ:

4.11 Սեփական կապիտալ, պահուստներ և շահաբաժինների վճարումներ

Ընկերության կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով:

Կանոնադրական կապիտալն իրենից ներկայացնում է թողարկված բաժնետոմսերի նոմինալ արժեքը:

Վերագնահատման պահուստը ներառում է *հողի և շենքերի* վերագնահատումից աճը:

Կուտակված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթը:

Սեփականատերերի հետ բոլոր գործարքներն առանձին-առանձին գրանցված են սեփական կապիտալում:

Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

4.12 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

- (ա) աշխատավարձերը և պարգևավճարները,
- (բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները,

Երբ աշխատակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությանն մատուցում են ծառայություններ, Ընկերությունն աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չգեղջված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայությունների դիմաց, ճանաչում է՝

- (ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված ցանկացած գումար հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չգեղջված գումարը, Ընկերությունը պետք է ճանաչի այդ տարբերությունը որպես ակտիվ (կանխավճարված ծախս)՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,
- (բ) որպես ծախս, եթե գումարը չի ներառվել այլ ակտիվի արժեքի մեջ:

Վճարովի բացակայություններ

Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ.

- (ա) կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքներն ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,
- (բ) չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Պարգևավճարներ

Պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Ընկերությունն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Ընկերությունը վճարում չկատարելու ոչ մի իրատեսական այլընտրանք չունի:

4.13 Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում ղեկավարության կատարած նշանակալի դատողություններ և գնահատման անորոշություն

ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Ընկերության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա:

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

Ընկերությունն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներ

Ղեկավարությունը կատարել է հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետների գնահատում: Ղեկավարության համոզմամբ գնահատված հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներն էականորեն չեն տարբերվում այդ ակտիվների տնտեսական կյանքից: Եթե հիմնական միջոցների փաստացի օգտակար ծառայության ժամկետները տարբերվեն գնահատումներից, ապա ֆինանսական հաշվետվությունները կարող են էականորեն տարբերվել:

5 Հասույթ

	2024թ.	2023թ.
Ապրանքների վաճառքից	3,714,473	3,266,848
Ծառայությունների մատուցումից	30,318	20,776
	3,744,791	3,287,624

Ընկերության հասույթն ըստ ճանաչման ժամկետայնության ներկայացված է ստորև.

	2024թ.	2023թ.
Ժամանակի մեջ ինչ որ պահին փոխանցվող ապրանքներ	3,714,473	3,266,848
Ժամանակի ընթացքում փոխանցվող ծառայություններ	30,318	20,776
	3,744,791	3,287,624

6 Իրացման ծախսեր

	2024թ.	2023թ.
Տրանսպորտային և ապահովագրական ծախսեր	29,076	23,665
Փոխհատուցումներ աշխատակիցներին	77,897	69,188
Այլ	22,272	5,730
	129,245	98,583

7 Վարչական ծախսեր

	2024թ.	2023թ.
Փոխհատուցումներ աշխատակիցներին	103,264	111,691
Աուդիտի և խորհրդատվական ծախսեր	50,653	77,590
Բանկային ծառայության և ապահովագրական ծախսեր	10,608	9,994
Մաշվածություն և ամորտիզացիա	22,624	31,574
Գրասենյակի և կոմունալ ծախսեր	8,715	3,735
Գործողման և ներկայացուցչական ծախսեր	6,420	5,821
Այլ	21,398	24,520
	223,682	264,925

8 Այլ ծախսեր

Ընթացիկ ժամանակաշրջանում այլ ծախսերում ներառվել են հիմնական միջոցների վաճառքից առաջացած ծախսերը՝ 17,272 հազար ՀՀ դրամ (2023թ.՝ 0), անորակ ապրանքների դիմաց վճարած փոխհատուցումը՝ 25,000 հազար ՀՀ դրամ (2023թ.՝ 0), ապրանքների որակական կորուստների հետևանքով առաջացած ծախսերը՝ 27,354 հազար ՀՀ դրամ (2023թ.՝ 2,611 հազար ՀՀ դրամ), դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի աճը՝ 48,601 հազար ՀՀ դրամ (2023թ.՝ 0) և այլ ծախսերը՝ 7,943 հազար ՀՀ դրամ (2023թ.՝ 3,946 հազար ՀՀ դրամ):

9 Ֆինանսական ծախսեր

	2024թ.	2023թ.
Բանկային վարկերի գծով տոկոսային ծախսեր	72,668	60,980
Ստացված փոխառությունների գծով տոկոսային ծախսեր	38,020	37,070
Ֆակտորինգի ֆինանսավորման գծով ֆինանսական ծախսեր	6,039	6,512
Ընդամենը ֆինանսական եկամուտ	116,727	104,562

10 Փոխարժեքային տարբերությունից զուտ օգուտ (վնաս)

	2024թ.	2023թ.
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	(1,397)	8,402
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ	68,455	(59,681)
Փոխարժեքային տարբերությունից զուտ օգուտ (վնաս)	67,058	(51,279)

11 Շահութահարկի գծով ծախս

	2024թ.	2023թ.
Ընթացիկ հարկ	34,125	13,929
Հետաձգված հարկ (տե՛ս Ծանոթագրություն 17)	(9,240)	(432)
Ընդամենը շահութահարկի գծով փոխհատուցում	24,885	13,497

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

	2024թ.	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2023թ.	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ-ների)	159,396		102,487	
Շահութահարկ՝ 18% դրույքաչափով (2023թ.՝ 18%)	28,691	18.00	18,448	18.00
Չնվազեցվող ծախսեր, զուտ	(3,806)	(2.39)	(4,951)	(4.83)
Շահութահարկի գծով փոխհատուցում	24,885	15.61	13,497	13.17

12 Հիմնական միջոցներ

	Հող, շենք և շինություններ	Մեքենաներ և սարքա- վորումներ և այլ	Ընդամենը
Սկզբնական արժեք			
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	603,028	52,000	655,028
Ավելացում	-	30,160	30,160
Վերագնահատումից արժեքի աճ	364,879	-	364,879
Վերագնահատման արդյունքում դուրսգրում	(6,235)		(6,235)
Դուրսգրում	(17)	-	(17)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	961,655	82,160	1,043,815
Ավելացում	-	1,674	1,674
Օտարման հետևանքով դուրսգրում	-	(20,333)	(20,333)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	961,655	63,501	1,025,156
Կուտակված ամորտիզացիա			
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	25,604	21,580	47,184
Տարվա հաշվարկ	19,876	11,618	31,494
Վերագնահատման արդյունքում մաշվածության դուրսգրում	(6,235)	-	(6,235)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	39,245	33,198	72,443
Տարվա հաշվարկ	21,522	13,570	35,092
Օտարման հետևանքով դուրսգրում	-	(3,060)	(3,060)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	60,767	43,708	104,475
Հաշվեկշռային արժեք			
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	922,410	48,962	971,372
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	900,888	19,793	920,681

Բանկային վարկերն ապահովելու նպատակով Ընկերությունը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գրավադրել է «Հող, շենք և շինություններ» դասում ներառված որոշ շինություններ և հողամասեր: Ընկերության «Հող, շենք և շինություններ» դասը ներառում է Հայաստանի Հանրապետության Արարատ մարզի Այնթապ համայնքի Երևան-Մեղրի մայրուղու թիվ 6/8 հասցեում գտնվող հողամասը, Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի 2-րդ արդյունաբերական թաղամասի թիվ 3 հասցեում գտնվող շինությունները և հողամասը:

Ընկերության հողամասերը և շինությունները գնահատվել են անկախ գնահատողի կողմից 2023թ. ընթացքում: Գնահատման համար օգտագործվել է շուկայական արժեքի որոշման համեմատական մեթոդը: Վերագնահատումից առաջացած աճը, հանած համապատասխան հետաձգված հարկերը, կրեդիտագրվել է վերագնահատման պահուստին՝ սեփական կապիտալում:

Մաշվածության գծով ծախսը ներառվել են իրացման և վարչական ծախսերում:

13 Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ

13.1 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են Ծանոթագրություն 4.6-ում: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքներն ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև:

Ֆինանսական ակտիվներ

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	773,307	460,435
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	15,489	6,669
Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	788,796	467,104
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	788,796	467,104

Ֆինանսական պարտավորություններ

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Ամորտիզացված արժեքով պահվող ֆինանսական պարտավորություններ		
Վարկեր և փոխառություններ	1,337,380	1,263,638
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	320,486	271,305
Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ	1,657,866	1,534,943
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	1,657,866	1,534,943

13.2 Վարկեր և փոխառություններ

	Ընթացիկ		Ոչ ընթացիկ	
	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Ապահովված բանկային վարկեր	953,252	983,086	15,896	1,852
Փոխառություններ	368,232	278,700	-	-
Ընդամենը վարկեր և փոխառություններ	1,321,484	1,261,786	15,896	1,852

14 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Ֆինանսական ակտիվներ		
Առևտրային դեբիտորական պարտքեր	841,866	480,393
Պարտքային կորուստների համար պահուստ	(68,559)	(19,958)
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	773,307	460,435
Ոչ ֆինանսական ակտիվներ		
Տրված կանխավճարներ	274,328	160,064
Պետական բյուջեից դեբիտորական պարտքեր	13,120	44,173
Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվներ	287,448	204,237
Ընդամենը առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	1,060,755	664,672

Բոլոր գումարները կարճաժամկետ են: Առևտրային դեբիտորական պարտքերի զուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

Առևտրային դեբիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում: Ընկերության՝ համեմատական ժամանակաշրջանի առևտրային և այլ դեբիտորական պարտքերը վերանայվել են արժեզրկման հայտանիշների առկայության ստուգման համար:

Ղեկավարությունը հավատացած է, որ պետական բյուջեից դեբիտորական պարտքերն ամբողջովին ենթակա են վերականգնման:

15 Պաշարներ

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Ապրանքներ պահեստում	968,222	963,567
Ապրանքներ ճանապարհին	63,474	45,362
Ապրանքների արժեզրկումից կորուստ	(584)	(3,338)
Ընդամենը պաշարներ	1,031,112	1,005,591

Տարվա ընթացքում ծախս ճանաչված պաշարների գումարը կազմում է 3,078,239 հազար ՀՀ դրամ (2023թ.՝ 2,764,639 հազար ՀՀ դրամ):

16 Կապիտալ և պահուստներ

16.1 Կանոնադրական կապիտալ

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կանոնադրական կապիտալի անվանական արժեքը կազմում է 134,000 հազար դրամ (2023թ.՝ 134,000 հազար դրամ):

Ընկերության սեփականատերերն են՝

- Հարություն Առաքելյանը (81%):
- Նաիրա Խաչատրյան (19%):

16.2 Վերագնահատման պահուստ

Վերագնահատման պահուստն առաջանում է հողերի և շենքերի վերագնահատման արդյունքում: Վերագնահատված հողերի և շենքերի օտարման կամ իրացման ժամանակ դրանց գծով վերագնահատման պահուստը հաշվեգրվում է ուղղակիորեն կուտակված շահույթին:

17 Հետաձգված հարկեր

Հետաձգված հարկերի շարժը ներկայացված է ստորև.

	2024թ.	2023թ.
Տարեսկզբի մնացորդ	(81,711)	(18,504)
Շահույթում կամ վնասում ճանաչված ծախս (տե՛ս Ծանոթագրություն 11)	9,240	432
Կրեդիտագրված այլ համապարփակ ֆինանսական արդյունքին	-	(63,639)
Տարեվերջի մնացորդ	(72,471)	(81,711)

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

	1 հունվարի 2024թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2024թ.
Հետաձգված հարկային ակտիվներ			
Առևտրային դեբիտորական պարտքեր	4,299	975	5,274
Առևտրային կրեդիտորական պարտքեր	3,592	8,749	12,341
	7,891	9,724	17,615
Հետաձգված հարկային պարտավորություններ			
Հիմնական միջոցներ	(89,602)	(484)	(90,086)
	(89,602)	(484)	(90,086)
Զուտ արդյունք - հետաձգված հարկային պարտավորություններ	(81,711)	9,240	(72,471)

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

	1 հունվարի 2023թ.	Այլ համա- պարփակ ֆինան- սական արդյունք- ներում ճանաչված	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2023թ.
Հեղաձգված հարկային ակտիվներ				
Առևտրային դեբիտորական պարտքեր	4,761	-	(462)	4,299
Առևտրային կրեդիտորական պարտքեր	5,824	-	(2,232)	3,592
	10,585	-	(2,694)	7,891
Հեղաձգված հարկային պարտավորություններ				
Հիմնական միջոցներ	(29,089)	(63,639)	3,126	(89,602)
	(29,089)	(63,639)	3,126	(89,602)
Զուտ արդյունք - հետաձգված հարկային պարտավորություններ	(18,504)	(63,639)	432	(81,711)

18 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Առևտրային կրեդիտորական պարտքեր	290,953	247,419
Հաճախորդներից կանխավճարներ	245,505	148,151
Վճարվելիք հարկեր և պարտավորություններ	10,689	10,824
Փոխհատուցումներ աշխատակիցներին	29,533	23,886
Ընդամենը առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	576,680	430,280

19 Կապակցված կողմեր

Ընկերության կապակցված կողմեր են հանդիսանում Ընկերության բաժնետերեր և հիմնական ղեկավար անձնակազմը (ներառյալ ժամանակավոր պաշտոնակատարները) և Ռոք Բերի ՍՊԸ-ն:

19.1 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու տարվա ընթացքում Ընկերության և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները հետևյալն են:

Գործարքներ

	2024թ.	2023թ.
Ստացված փոխառություններ	30,727	86,860
Փոխառությունների մարում	24,179	117,688
Տոկոսային ծախս	14,250	9,318
Ապրանքների, ծառայությունների ձեռքբերում	19,083	24,400
Ապրանքների և ծառայությունների վաճառք	381,581	274,172

Մնացորդներ

	2024թ.	2023թ.
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	475,477	179,683
Ստացված փոխառություններ	105,997	99,460

19.2 Գործարքներ ղեկավարության և նրանց անմիջական ազգականների հետ

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը, որը ներառված է «Փոխհատուցումներ աշխատակիցներին» հոդվածում:

	2024թ.	2023թ.
Աշխատավարձ և պարգևատրումներ	34,733	34,670
Ընդամենը	34,733	34,670

20 Պայմանականություններ

20.1 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Ընկերությունը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Ընկերության գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

20.2 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

20.3 Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Ղեկավարությունը համոզված է, որ Ընկերությունը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջները և վստահ է, որ Ընկերությունը շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի: Այնուամենայնիվ, Հայաստանում շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխություններն ու օրենսդրության մեկնաբանություններն ապագայում կարող են էական պարտավորություններ առաջացնել:

21 Ֆինանսական գործիքների ռիսկ

Ռիսկի կառավարման քաղաքականությունները և նպատակները

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Ընկերությունը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկ, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

21.1 Շուկայական ռիսկի վերլուծություն

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Ընկերությունը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժույթային ռիսկի, որոնք բխում են ինչպես գործառնական գործունեությունից:

Արտարժույթի ռիսկ

Ընկերությունը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը: Ընկերության գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն առաջանում է Ընկերության արտերկրյա ձեռքբերումներից, որոնք, ի սկզբանե, արտահայտված են ԱՄՆ դոլարով և եվրոյով:

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Ընկերությանը ենթարկվում են արտարժույթային ռիսկի, նկարագրված են ստորև: Արտացոլված գումարներն իրենցից ներկայացնում են հիմնական ղեկավար անձնակազմին տրամադրված տվյալները, որոնք արտահայտված են հայկական դրամով՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի ամսաթվի փոխարժեքով:

Հոդված

31 դեկտեմբերի 2024թ.	ԱՄՆ դոլար	Եվրո
Ֆինանսական պարտավորություններ		
Վարկեր և փոխառություններ	176,692	805,814
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	41,928	195,126
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	218,621	1,000,941
Զուտ արդյունք	(218,620)	(1,000,940)

Հոդված

31 դեկտեմբերի 2023թ.	ԱՄՆ դոլար	Եվրո
Ֆինանսական պարտավորություններ		
Վարկեր և փոխառություններ	158,976	770,371
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	14,267	175,294
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	173,243	945,665
Զուտ արդյունք	(173,243)	(945,665)

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է ընկերության զգայունությունը՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի 10% (2023թ.՝ 10%) աճին/նվազմանը: 10%-ը (2023թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն

արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2023թ.՝ 10%):

Դրամի արժուրումն ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ 10%-ով (2023թ.՝ 10%) կունենա հետևյալ ազդեցությունը:

	ԱՄՆ դոլարի ազդեցություն		Եվրոյի ազդեցություն	
	2024թ.	2023թ.	2024թ.	2023թ.
Շահույթ կամ վնաս	21,862	17,324	100,094	94,566
	21,862	17,324	100,094	94,566

Արտարժույթի փոխարժեքի տատանման ազդեցությունը տարվա ընթացքում փոփոխվում է՝ կախված արտերկրյա գործարքների ծավալից: Այդուհանդերձ, վերը ներկայացված վերլուծությունը կարելի է համարել խմբի՝ արտարժույթային ռիսկին ենթարկվածության արտացոլումը:

21.2 Պարտքային ռիսկի վերլուծություն

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Ընկերությունը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Այս ռիսկի ազդեցությունը Ընկերության համար առաջանում է տարբեր ֆինանսական գործիքներից, ինչպիսիք են դեբիտորական պարտքերը և բանկերում մնացորդները, ներառյալ ժամկետային ավանդները: Ընկերությունը կարգավորում է այս ռիսկը դրամական միջոցները հեղինակավոր բանկերում պահելու միջոցով: Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի հավաքագրման հետ կապված ռիսկերը շատ փոքր են:

Ընկերությունը շարունակաբար հսկում է հաճախորդների պարտքի հատկանիշները՝ ելնելով պարտքի վարկանիշային քարտից: Եթե հնարավոր է, օգտագործվում են նաև հաճախորդների վերաբերյալ արտաքին վարկանիշներ և/կամ հաշվետվություններ: Ընկերության քաղաքականությունն է համագործակցել միայն վճարունակ գործընկերների հետ: Ընթացիկ պարտքային ռիսկը կառավարվում է պարբերական ժամկետային վերլուծություններ կատարելու միջոցով՝ համատեղելով յուրաքանչյուր հաճախորդի համար վարկային պարտքի սահմանաչափի որոշմամբ:

Առևտրային դեբիտորական պարտքերը ներառում են մի քանի հաճախորդներ միևնույն արդյունաբերական (գյուղատնտեսական) և աշխարհագրական գոտիներում: Առևտրային դեբիտորական պարտքերի համար Ընկերությունը գրավ չի վերցնում: Բացի այդ, Ընկերությունը գրավ չի պահանջում նաև այլ ֆինանսական ակտիվների համար (օրինակ՝ բանկերում պահվող դրամական միջոցներ և դրանց համարժեքներ):

Պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը ներկայացված է հետևյալ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներով՝

	2024թ.	2023թ.
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	773,307	460,435
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	12,951	1,461
Ընդամենը	786,258	461,896

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության բանկային հաշիվների մնացորդները կազմում էին համապատասխանաբար 12,951 հազար << դրամ և 1,461 հազար << դրամ, ինչը ներկայացնում է առավելագույն ենթարկվածությունը պարտքային ռիսկին այս ակտիվների հետ կապված:

Դրամական միջոցները և դրանց համարժեքները պահվում են ընդհանուր ակտիվներով տասը խոշոր հայկական բանկերից հանդիսացող բանկերում, և Ընկերությունը չի ակնկալում, որ այդ բանկերը չեն կատարի իրենց պայմանագրային պարտականությունները: Ընկերության գնահատմամբ բանկային

հաշիվների մնացորդների գծով արժեզրկումից կորուստ չի ճանաչվել, ինչը հիմնականում պայմանավորված է վերջիններիս կարճաժամկետ բնույթով:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Ընկերությունը բոլոր առևտրային դեբիտորական պարտքերի համար կիրառում է ՖՀՄՍ 9-ի պարզեցված մոդելը. «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների ճանաչում», քանի որ այս դեբիտորները չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ:

Ակնկալվող պարտքային կորուստները չափելիս առևտրային դեբիտորական պարտքերը գնահատվել են հավաքական հիմունքով, քանի որ դրանք ունեն պարտքային ռիսկի ընդհանուր բնորոշումներ: Դրանք խմբավորվել են՝ ելնելով ժամկետանց օրերից:

21.3 Իրացվելիության ռիսկի վերլուծություն

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Ընկերությունն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Ընկերությունը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ դրամարկղում և բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

Հետևյալ աղյուսակում ներկայացված է Ընկերության ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով պայմանագրային մնացյալ մարման ժամկետները: Աղյուսակը պատրաստված է ֆինանսական պարտավորությունների չզեղչված դրամական միջոցների հոսքերի հիման վրա՝ հաշվի առնելով ամենավաղ ամսաթիվը, երբ Ընկերությունը ստիպված կլինի մարել այդ պարտավորությունները: Աղյուսակը ներառում է տոկոսների և մայր գումարի գծով դրամական միջոցների հոսքերը:

2024թ.

	Անտոկոս	Գործիքներ հաստատուն տոկոսադրույքով	Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք (%)			
Մինչև 6 ամիս	-	484,756	484,756
6 ամսից մինչև 1 տարի	320,486	794,695	1,115,181
1-5 տարի	-	57,929	57,929
	320,486	1,337,380	1,657,866

2023թ.

	Անտոկոս	Գործիքներ հաստատուն տոկոսադրույքով	Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք (%)			
Մինչև 6 ամիս	-	416,787	416,787
6 ամսից մինչև 1 տարի	271,305	844,999	1,116,304
1-5 տարի	-	1,852	1,852
	271,305	1,263,638	1,534,943

Ընկերությունն իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը, մասնավորապես՝ դրամական միջոցները, առևտրային դեբիտորական պարտքերը: Ընկերության դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերը բավարար են անհրաժեշտ դրամական արտահոսքերը կատարելու համար:

22 Իրական արժեքի չափում

Ընկերությունը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ակտիվները և պարտավորությունները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

- 1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),
- 3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

22.1 Ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքի չափում

Ընկերության հողը և շենքերը հաշվառվում են վերագնահատված արժեքով: Հողի և շենքերի գնահատված իրական արժեքները դասակարգվում են իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում: Այս ակտիվների իրական արժեքները գնահատվում են՝ հիմք ընդունելով անկախ, մասնագիտական որակավորում ունեցող գնահատողների գնահատականները, որոնք ունեն անհրաժեշտ արտոնագրեր: Զգալի փոփոխականները և ենթադրությունները մշակվել են ղեկավարության հետ սերտ համագործակցության պայմաններում: Հետագա տեղեկատվությունը ներկայացված է ստորև:

Հող և շենքեր

Ընկերության "Հող և շինություններ" դասը հաշվառվում են շուկայական արժեքով: Գնահատված իրական արժեքը դասակարգվում է իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում: Այս ակտիվների իրական արժեքը գնահատվում է՝ հիմք ընդունելով անկախ, մասնագիտական որակավորում ունեցող գնահատողների գնահատականները, որոնք ունեն անհրաժեշտ արտոնագրեր:

Գնահատումն իրականացվել է՝ օգտագործելով համեմատական մոտեցումը (տե՛ս Ծանոթագրություն 12):

23 Կապիտալի ռիսկի քաղաքականություններ և ընթացակարգեր

Ընկերությունն իր կապիտալը կառավարում է այնպես, որպեսզի ապահովի իր անընդհատ գործելու հնարավորությունը և բաժնետերերին բավարար եկամուտ մատակարարի:

Ընկերության կապիտալը կազմված է սեփական կապիտալից, որը ներառում է կանոնադրական կապիտալ, կուտակված շահույթն ու վերագնահատման պահուստը, ինչպես նաև փոխառու միջոցները, որոնք ներառում են վարկեր և փոխառությունները, որոնք բացահայտված են Ծանոթագրություն 13.2-ում:

Ղեկավարությունը գնահատում է Ընկերության կապիտալի պահանջները, որպեսզի ապահովի ընդհանուր ֆինանսավորման էֆեկտիվ կառուցվածք՝ խուսափելով չափազանց մեծ լծակավորումից (ելվերից):

Ընկերության՝ որպես կապիտալ կառավարվող գումարները ստուգվող հաշվետու տարվա համար ամփոփված են ստորև.

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Զուտ պարտք		
Ընդհանուր սեփական կապիտալ	1,008,304	873,793
Հանած՝ Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(15,489)	(6,669)
	992,815	867,124
Ճշգրտված սեփական կապիտալ		
Ընդհանուր սեփական կապիտալ	1,008,304	873,793
Վարկեր և փոխառություններ	1,337,380	1,263,638
Ընդհանուր ֆինանսավորում	2,345,684	2,137,431
Զուտ պարտքի և ճշգրտված սեփական կապիտալի հարաբերակցության գործակից	0.42	0.41